

## ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԻՄԱԿԱՆՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

### Լիանա ՄԱՐՈՒՔՅԱՆ

**ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ,**

**Կոնրադ Աղենառուեր հիմնադրամի Երևանյան գրասենյակի նախագծի ղեկավար**

Վերջին տասնամյակների ընթացքում ավելի ու ավելի է ուշադրություն դարձվում անչափահասների նկատմամբ նշանակվող պատիժների, ինչպես նաև անչափահաս դատապարտյալների կողմից պատիժ կրելու պայմանների նկատմամբ: Եվրոպական երկրներում՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Շվեյցարիայում, Նորվեգիայում, Հոլանդիայում նկատվում է անչափահասների նկատմամբ կիրառվող քրեական և քրեակատարողական քաղաքականության մեջմացում: անչափահասների ազատազրկման պատժատեսակները հիմնականում փոխարինվում են այլընտրանքային՝ ազատազրկման հետ չկապված պատժատեսակներով, ինչն անչափահասին հնարավորություն է տալիս խուսափել կրմինոգեն միջավայրում հայտնվելուց և կկանխի նրա կողմից պոտենցիալ կրկնահանցագործություն կատարելու հավանականությունը<sup>1</sup>:

Առաջադրված հարցը թեժ քննարկումների տեղիք է տվել նաև իրավաբանական գրականության մեջ: Օլիվեր Շայբերը, Ալբերտ Շտայնհաուգերը մասնավորապես նշում են, որ անչափահաս դատապարտյալի ուղղման համար քրեակատարողական հիմնարկը լավագույն վայրը չէ<sup>2</sup>: Սակայն, ըստ Յոախիմ Վալթերի, երբ դա անխուսափելի է, ապա քրեակատարողական հիմնարկներում անչափահասների պատժի կրումը պետք է իրականացվի առավելագույնս հստակ կանոնակարգված՝ անչափահասների կողմից հետագայում հասարակությանը ինտեգրվելը հնարավորինս արդյունավետ դարձնելու, ինչպես նաև կրկին հանցագործություն կատարելու հավանականությունը նվազեցնելու համար<sup>3</sup>:

ՀՀ դատական դեպարտամենտի՝ անչափահաս դատապարտյալների վերաբերյալ 2011 թ. հաշվետվության համաձայն՝ այդ տարվա ընթացքում ազատազրկման են դատապարտվել 95 անչափահաս, որոնցից 15-ի նկատմամբ կիրառվել է ազատազրկան հետ չկապված պատժատեսակ, իսկ 60-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել: 2012թ.-ին այդ ցուցանիշը եղել է համապատասխանաբար 76, 11, 52<sup>4</sup>: Ինչպես տեսնում ենք, անչափահասների նկատմամբ նշանակվող պատժատեսակների մեջ

<sup>1</sup> Տե՛ս Անչափահասների գործով դատավարությունների դիտարկում, ԵԱՀԿ, ՔՀՀ, Երևան, 2010, էջ 83-86:

<sup>2</sup> Տե՛ս <http://www.zeit.de/2013/33/justizanstalt-josefstadt-wien>

<sup>3</sup> Տե՛ս <http://www.jva-adelsheim.de/pb/,Lde/1237392/?LISTPAGE=1237312>

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ դատական դեպարտամենտի անչափահասների վերաբերյալ 2011-2012 թթ. հաշվետվություն:

գերակշռում է ազատազրկումը, թեկուցև այն իհմնականում պայմանականորեն չի կիրավել: Անչափահասների նկատմամբ նշանակվող պատժատեսակների վերլուծությունը թույլ է տալիս հանգել եղբակացության, որ տվյալ ոլորտում անհրաժեշտ են արմատական բարեփոխումներ մասնավորապես օրենսդրության մեջ:

Հարկ է նշել, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետության /այսուհետ՝ ԳԴՀ/ սահմանադրական դատարանը դեռևս 2006 թ. մայիսի 31-ին որոշել է. «Անչափահաս դատապարտյափի նկատմամբ քրեական պատիժ կիրառող պետությունը կրում է մեծ պատասխանատվություն վերջինիս անձի հետագա զարգացման համար...: ԳԴՀ հոդերի օրենսդրական մարմինների կողմից պետք է ընդունվեն անչափահասների առանձնացված քրեակատարողական օրենսգրքեր, որոնցով ավելի մանրամասն կվարգավորվեն անչափահասների կողմից ազատազրկման հետ կապված պատժի կրման ընթացակարգը»<sup>5</sup>:

ԳԴՀ սահմանադրական դատարանի նշված որոշման դրույթները ևս մեկ անգամ հավաստում են, որ անչափահասների նկատմամբ պատիժ իրականացնող մարմինները պետք է լինեն ավելի ուշադիր և զգո՞ւ պատժի իրականացման ընթացքում անչափահասների վերասոցիալականացման և ուղղման ընթացքը կանոնակարգելիս, կրանց հետ սոցիալական-հոգեբանական աշխատանքներ իրականացնելիս, կրթական գործընթացը և ազատ ժամանցը կազմակերպելիս, սպորտային զբաղվածությունն ապահովելիս և այլն:

Եթե ԳԴՀ-ն բարեփոխումների իրականացումն սկսել է հենց քրեակատարողական ոլորտից, ապա Ուստահանի Դաշնության քրեական և քրեակատարողական քաղաքականության մեջ բարեփոխումներն սկսվում են անչափահասների կողմից հանցագործությունների կատարումը կանխարգելելուց և պրոֆիլակտիկ միջոցառումներ իրականացնելուց<sup>6</sup>: Իհարկե, քրեակատարողական իհմնարկներում պատժի կրման ընթացքում անչափահասների վերասոցիալականացմանն ուղղված միջոցառումները ևս հանցագործությունների կանխարգելման կարևորագույն մաս են: Դրանց նպատակն է անչափահասի մեջ ծևականության բարոյական և իրավական նորմերի պահանջներին հետևելու անհրաժեշտության համոզմունք: Ուստահանի Դաշնությունում, ինչպես և ՀՀ-ում առկա է անչափահասների կողմից պատժի կրման ընթացակարգը կարգավորող քրեակատարողական ընդհանուր օրենսգրքը, որը կարգավորում է ինչպես մեծահասակների, այնպես էլ անչափահասների կողմից պատժի կրման և կատարման ընթացակարգերը, ուստի անչափահասների նկատմամբ իհմնականում կիրառվում են մեծահասակների ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկություններին համապատասխանեցված նորմերը: Կարծում ենք՝ գործող ՀՀ քրեակատարողական օրենսգրքում կարելի է նախատեսել առանձին գլուխ, որը կվարգավորի անչափահասների կողմից ազատազրկման հետ կապված պատժի կրման առանձնահատկությունները:

<sup>5</sup>Տե՛ս ԳԴՀ Սահմանադրական դատարանի 2006 թ. մայիսի 31-ի թիվ BvR 1673/04 որոշում:

<sup>6</sup>Տե՛ս Громадская Н. В., Смирнов Л. Б. Особенности политики в области реабилитации несовершеннолетних правонарушителей в условиях формирования правового государства, Вестник Санкт-Петербургского университета МВД России, N4 (36), 2007, էջ 113:

Դիտարկենք այն հիմնական խնդիրները, որոնք առկա են <<ում անչափահասների կողմից ազատազրկման հետ կապված պատժատեսակի իրականացնան ժամանակ ինչպես օրենսդրության մեջ, այնպես էլ գործնականում:

Առաջին խնդիրը վերաբերում է անչափահաս դատապարյալի վերասոցիալականացման գործում սոցիալական աշխատողի դերի թերագնահատմանը:

Թե՛ արտասահմանյան երկրների պրակտիկայում, թե՛ իրավաբանական գրականության մեջ անչափահաս դատապարտյալի վերասոցիալականացման գործում չափազանց կարևորություն է սոցալական աշխատողի դերը, քանի որ հենց նա է իր մասնագիտական գործառությունները կատարելիս օգնում անչափահաս դատապարտյալին հասրակությանը վերահսկելով՝ ընտանիքի հետ փոխհարաբերությունները պահպանելու և այլ միջոցառումներ իրականացնելով<sup>7</sup>:

Միջազգային իրավական փաստաթղթերը ևս կարևորում են անչափահաս դատապարտյաների հետ աշխատանքի գործընթացում մասնագիտական համապատասխան պատրաստվածություն ունեցող կադրերի ներգրավումը:

Այսպես, 1985 թ. ՄԱԿ-ի անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու նվազագույն չափորոշիչների 22-րդ կետի մեկնաբանության մեջ կարևորելով սոցալական աշխատողների դերը անչափահաս դատապարտյաների հետ տարվող աշխատանքում շեշտադրվում է նրանց մասնագիտական պատրաստվածությունը<sup>8</sup>:

ՀՀ անչափահասների համար նախատեսված «Արովյան» քրեակատարողական միակ հիմնարկում առկա է մասնագիտական կրթությամբ փորձառու աշխատակիցների, հատկապես անչափահասների գծով մասնագիտացված հոգեբանների, սոցաշխատողների և մանկավարժների պակաս: «Արովյան» քի-ի սոցալ-հոգեբանական ծառայության աշխատողները նման ներ մասնագիտական պատրաստվածություն չունեն, ավելին՝ սպասարկում են միանգամից 3 տեղամաս՝ կանանց քրեակատարողական հիմնարկը, անչափահասներինը և մեկուսարանը<sup>9</sup>:

Անչափահասների պատժի իրականացման գործընթացում համապատասխան պատրաստվածություն չունեցող անձանց ընդգրկվելը միայն բացասական հետևանք ներ կարող է ունենալ: «Արովյան» քրեակատարողական հիմնարկում Քաղաքացիական հասարակություն հասարակական կազմակերպության և ԵԱՀԿ համատեղ իրականացված հարցումներից պարզ դարձավ, որ այնտեղ կարող են աշխատանքի ընդունվել այլ քրեակատարողական հիմնարկներում աշխատած մարդիկ, ովքեր չեն տիրապետում անչափահասների հետ աշխատանքի նրբություններին, հաճախ անչափահասների հետ վարվում են այնպես, ինչպես չափահասների հետ<sup>10</sup>. Ելեկով վերոնշյալից՝ անհրաժեշտ ենք համարում անչափահասների քրեակատարողական հիմնարկներում սոցաշխատողների, հոգեբանների և մանկավարժների հատուկ պատրաստվածության

<sup>7</sup> St'u Jugendstrafvollzug für das 21. Jahreshundert? Stephan Schwirzer, Peter Lang, 2006, էջ 240-242:

<sup>8</sup> St'u 40/33. United Nations Standard Minimum Rules for the Administration of Juvenile Justice ("The Beijing Rules"), 29.11.1985.

<sup>9</sup> St'u Անչափահասների հետ տարվող սոցալ-հոգեբանական աշխատանքների և կրթական գործընթացի ուսումնասիրություն Արովյան քի-ում, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ, Երևան 2012 թ., էջ 11:

<sup>10</sup> St'u նոյն տեղում, էջ 12:

առկայությունը և վերապատրաստումներին պարբերաբար մասնակցելը: Քեզ աշխատակիցները ՀՀ-ում վերապատրաստվում են 3 տարին մեկ անգամ՝ ՀՀ արդարադատության նախարարության ու կրթության և գիտության նախարարության կողմից: Ըստ հարցումների՝ «Արովյան» քիչ աշխատակիցների վերապատրաստումները հիմնականում կրում են ծևական բնույթ<sup>11</sup>:

Այս առօլուկ հետաքրքիր է ֆրանսիայի փորձը, որտեղ գործում է Ազգային քրեակատարողական դպրոց: Այս հաստատությունում պատրաստում և վերապատրաստում են մասնագետներ (հոգեբաններ, սոցիալական աշխատողներ և այլն) նաև անչափահաների քրեակատարողական հիմնարկներում աշխատելու համար: Ավելին, տվյալ դպրոցում անչափահաների քրեակատարողական հիմնարկում աշխատողների ուսուցումն իրականացվում է 2001 թ. լույս տեսած «Guide du travail aupres des mineurs en detention» հատուկ ծերնարկի հիման վրա, որի հիմքում ընկած են անչափահան դատապարտյալների հետ վարվեցողության հիմնարար սկզբունքները<sup>12</sup>: Նման ծերնարկը ՀՀ-ում կօգնի կարգավորելու վարչակազմ-դատապարտյալ փոխհարաբերությունները:

Անչափահաների նկատմամբ պատժի իրականացման հիմնախնդիրներից են նաև անչափահաների ուղղման հստակ պլանի բացակայությունը և անչափահասի ուղղման աշխատանքներ մշակելիս նրա ներգրավվածությունը :

Արտասահմանյան երկրներում, օրինակ՝ ԳԴՀ-ում, անչափահաների քրեակատարողական օրենսգրքերը նախատեսում են անչափահան դատապարտյալների ակտիվ մասնակցությունն իրենց իսկ վերասոցիալականացման և ուղղման գործընթացին՝ նրանց մասնակից դարձնելով, օրինակ, իրենց վերասոցիալականացմանն ուղղված միջոցառումներ նախատեսող ուղղման պլանի մշակմանը<sup>13</sup>: Այսպես, անչափահաների մասնակցությունն իրենց վերասոցականացման և ուղղման գործընթացին նախատեսված է Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 12-րդ հոդվածով, ինչպես նաև ԳԴՀ հոդերի անչափահաների քրեակատարողական օրենսգրքերով: Այս դրույթները մասնագիտական գրականության մեջ բնութագրվում են որպես «քի-ում ժողովրդավարությունն ապահովվող սկզբունք»<sup>14</sup>: Մեր կարծիքով, անչափահաների ընդգրկվածությունն իրենց իսկ վերասոցիալականացման գործընթացին կարող է էականորեն բարձրացնել դրա արդյունավետության մակարդակը՝ միաժամանակ դրական ազդեցություն թողնելով անչափահաների ինքնազնահատականի, ինչպես նաև պատասխանատվության զգացումի բարձրացման վրա:

Գերմանիայում հատուկ կարևորություն է տրվում ուղղման պլանին, ավելին՝ ԳԴՀ հոդերի քրեակատարողական օրենսգրքերը հստակ նախատեսում են ուղղման պլանի նպատակը, կառուցվածքը և ենթակա խնդիրները: Ուղղման պլանի մեջ են մտնում դատապարտյալ կրթության, աշխատանքին ներգրավվածության մասին տվյալները, դաստիարակչական բնույթի միջոցառումներին մասնակցության, մարզական գրադարձութ-

<sup>11</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 14:

<sup>12</sup> Տե՛ս Juigendstrafvollzug in Deutschland und Frankreich, Daniel Boernhofer, Nomos, Auflage 2010, Giessen, էջ 125:

<sup>13</sup> Տե՛ս Jugendstrafvollzugsrecht, Heribert Ostendorf, Kiel, Nomos, 2010, էջ 133-135:

<sup>14</sup> Տե՛ս Jugendstrafvollzug für das 21. Jahrhundert? Stephan Schwirzer, Peter Lang, 2006, էջ 233-235:

յան, ազատ ժամանցի անցկացման, տեսակցությունների, արձակուրդների, դատապարտյալի վարքի, ուղղման պլանի վերանայման ժամկետի վերաբերյալ տեղեկությունների<sup>15</sup>: Փաստորեն, ուղղման պլանը ներառում է անչափահասի վերասոցիալականացմանը և ուղղմանն ուղղված միջոցառումների իրականացման մասին համապարփակ տեղեկություններ, որոնք ավելի արդյունավետ են դարձնում այդ գործընթացի գնահատումը՝ ըստ անհրաժեշտության նրա նկատմամբ իրականացվող միջոցառումների բնույթը փոփոխելու, ինչպես նաև պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքերում:

Թեև «Արովյան» անչափահասների քրեակատարողական հիմնարկում ներդրված են անչափահասների անհատական քարտեր, սակայն դրանք խիստ տարրերվում են ուղղման պլանից: Անհատական քարտի մեջ բացառապես նշվում են անչափահասին վերաբերող անհատական տվյալներ: <<-ում կարելի է կիրառել և անհատական քարտերը, և գործածության մեջ դնել անհատական պլանը, կամ էլ երկուսը բովանդակյան առումով համատեղել մեկում, ինչպես դա արվում է Գերմանիայում և Ֆրանսիայում:

Ելեկով վերոնշյալից՝ անհրաժեշտ ենք համարում << քրեակատարողական օրենսգրքում անչափահաս դատապարտյալների ուղղման պլանի նախատեսումը և այն գործնականում կիրառելը, ինչն ավելի արդյունավետ կղարձնի անչափահաս դատապարտյալի նկատմամբ իրականացվող պատիժը և կապահովի դրա նպատակները:

<<-ում առկա կարևորագույն հիմնախնդիրներից է նաև դատապարտյալ անչափահասների ուղղման և վերասոցիալականացման գործընթացում արտաքին աշխարհի հետ կապի ապահովումը: Այդ հարցում առանձնահատուկ նշանակություն ունի անչափահաս դատապարտյալի ծնողների մասնակցությունը: << քրեակատարողական օրենսդրությունը սահմանում է անչափահասի և նրա ծնողների տեսակցությունների ապահովման կարգը, սակայն, օրինակ, ծնողներին ընդգրկել անչափահաս դատապարտյալների վերասոցիալականացման գործընթացին << օրենսդրությամբ նախատեսված չէ:

Այսպես, Գերմանիայում անչափահաս դատապարտյալների քրեակատարողական ընթացակարգերի կարգավորմանը ներկայացվող նվազագույն չափորոշիչների մեջ նշվում է, որ անչափահաս դատապարտյալների ծնողներին ևս պետք է ներգրավել ինչպես ուղղման պլանի կազմմանը, այնպես էլ դաստիարակչական բնույթի միջոցառումների իրականացմանը, որոշումների կայացմանը, ինչպես նաև անչափահաս դատապարտյալին քրեակատարողական հիմնարկից ազատելու նախապատրաստման գործընթացին<sup>16</sup>:

Կարծում ենք՝ անչափահասների ուղղման և վերասոցիալականացման գործընթացում ծնողների մասնակցությանը պետք է ավելի մեծ կարևորություն տրվի. ծնողները, լավատեյակ լինելով իրենց երեխաների առողջական, ֆիզիոլոգիական առանձնահատկություններին, ինչպես նաև նրանց բնավորության գծերին, կկարողանան լավա-

<sup>15</sup>Տե՛ս ԳԴՀ Նորդհայն Վեստֆալեն հողի անչափահասների քրեակատարողական օրենսգիրը, 20.11.2007:

<sup>16</sup>Տե՛ս <http://www.dvjj.de/nachrichten-aktuell/eckpunktepapier-anforderungen-ein-zuk%C3%BCnftiges-jugendstrafvollzugsgesetz>

գույնս օգնել քրեակատարողական իիմնարկի վարչակազմին անշափահասի վերասուցականացումն առավել արդյունավետ իրականացնելու հարցում:

Անշափահասների վերասուցիալականացման գործընթացում կարևորվում է արտաքին աշխարհի հետ կապի ակտիվ պահպանման այլ միջոցառումները, ինչպիսիք են՝ նամակագրությունը, տեսակցությունները, հեռակապից, գրականությունից և լրատվամիջոցներից օգտվելը: Այդ պարտականությունը <<ում իրականացնում են քի-ի սուցական աշխատողները, ովքեր ապահովում են անշափահաս դատապարտյալների փոխհարաբերություններն ընտանիքի, ինչպես նաև հանգործակցում են գբաղվածության տարածքային կենտրոնների հետ:

Մի շարք արտասահմանյան երկրներում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Ավստրիայում, արտաքին աշխարհի հետ կապի ակտիվ պահպանման միջոցառումների շարքին է դասվում նաև դատապարտյալին տրամադրվող արձակուրդը: Օրինակ, Գերմանիայում դրան հատուկ անդրադարձ է կատարվում անշափահասների քրեակատարողական օրենսգրքերում<sup>17</sup>:

<< քրեակատարողական օրենսգրքում անշափահաս դատապարտյալների համար արձակուրդ նախատեսված չէ: Ավելին, տեսակցությունները, որոնք ևս կարևոր են անշափահասների վերասուցիալականացման գործում, << քրեակատարողական օրենսգրքում անշափահասների համար հատուկ և հստակ կանոնակարգում չեն ստացել: Այսպես, նախատեսվում է կալանքի դեպքում անշափահաս դատապարտյալին ամիսը մեկ անգամ չորսամյա կարձատու տեսակցություն: Ինչ վերաբերում է երկարատու տեսակցություններին, ապա << քրեակատարողական օրենսգիրքը հատուկ կարգավորում չի նախատեսում՝ անշափահաս դատապարտյալներին տրվող երկարատու տեսակցությունները կարգավորելով մեծահասակ դատապարտյալների նկատմամբ կիրառվող նորմերով: Մեկնումների համար ևս անշափահասների համար առանձին կարգավորում չկա, և անշափահաս դատապարտյալների մեկնումների ժամկետները և տրամադրման կարգը տարբերակված չեն մեծահասակ դատապարտյալներին տրամադրվող մեկնումների կարգից և ժամկետներից: Արտասահմանյան երկրներում ևս այս հարցը կարգավորված է մասնակիորեն. ԳԴՀ Նորդհայն Վեստֆալեն հողի անշափահասների քրեակատարողական օրենսգրքով նախատեսված է ամսական նվազագույնը 4 ժամ կարձատու տեսակցության իրավունք՝ չսահմանափակելով դրա հաճախականությունը: Այսինքն՝ կարձատու տեսակցությունները կարող են լինել 1-ից ավելին, սակայն դրանց ժամային հանրագումարը չի կարող գերազանցել 4 ժամը: Ընդ որում՝ 4 ժամը նվազագույն սահման է. այն կարող է ավելացվել օրենքով նախատեսված դեպքերում: Այդ օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասը, կարևորելով արձակուրդի դերն անշափահասի վերասուցիալականացման գործում, նախատեսում է նաև, որ անշափահաս դատապարտյալներին մեկ տարվա մեջ կարող է հատկացվել առավելագույնը 24 օր արձակուրդ, ընդ որում այդ ժամկետը մտնում է պատժի ժամկետի մեջ<sup>18</sup>: Սակայն ԳԴՀ հողերի անշափահասների քրեակատարողական օրենսգրքերը կարգավորում չեն տալիս անշափահաս դատապարտյալների երկարատու այցելություններին: «Անշափահաս դատապարտյալ-

<sup>17</sup> St's Jugendstrafvollzugsrecht, Heribert Ostendorf, Kiel, Nomos, 2010, էջ 405-468:

<sup>18</sup> St's ԳԴՀ Նորդհայն Վեստֆալեն հողի անշափահասների քրեակատարողական օրենսգիրք, 20.11.2007:

ներին երկարատև այցելությունները չեն նախատեսվում օրենսդրությամբ, սակայն դրանք չեն էլ արգելվում: Այսինքն՝ օրենսդիրը դրանք տրամադրելու հայեցողությունը թողել է անչափահասների քրեակատարողական հիմնարկների վրա, ինչը միանշանակ չի ընդունվում գերմանական իրավաբանական գրականության մեջ»<sup>19</sup>, - գրում է Դանիել Բորնհյոֆերը:

Ֆրանսիայի օրենսդրությամբ նշված է, որ յուրաքանչյուր դատապարտյալ ունի շաբաթական մեկ տեսակցության իրավունք՝ չնշելով տեսակցության առավելագույն կամ նվազագույն տևողությունը՝ այն թողնելով քի հայեցողությանը: Ֆրանսիայի օրենսդրությամբ նշվում է միայն, որ խրախուսելի է անչափահաս դատապարտյալներին հատկացնել շաբաթը մեկ անգամից ավել տեսակցություններ: Ֆրանսիայում երկարատև տեսակցությունները ևս կարգավորվում են քի ենթաօրենսդրական ակտերով<sup>20</sup>:

Հաշվի առնելով արտասահմանյան երկրների արդյունավետ փորձը՝ առաջարկում ենք <<-ում ևս նախատեսել անչափահաս դատապարտյալների համար ավելի երկար ժամանակահատվածով և հաճախականությամբ տեսակցություններ՝ ինչպես կարձատեն, այնպես էլ երկարատև, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում՝ արձակուրդի հնարավորություն:

Մեր կարծիքով, անչափահաս դատապարտյալներին վարձատրվող աշխատանքով ապահովելը ևս համարվում է վերասցիալականացման նպատակին հասնելու կարևորագույն պայման: «Աբովյան» քի-ում անչափահաս դատապարտյալներն ընդգրկվում են «հանրօգուտ» աշխատանքների մեջ, ինչպիսիք են մաքրության ապահովումը, այգու բարեկարգումը, խցերի վերանորոգումը, որի դիմաց, սակայն, դատապարտյալները չեն վարձատրվում<sup>21</sup>: Առաջարկում ենք խստակ կարգավորում տալ հատկապես անչափահաս դատապարտյալների կողմից կատարված աշխատանքի դիմաց վարձատրությանը:

Կարևորում ենք նաև ՔԿՀ-ում անչափահաս դատապարտյալների ժամանցի կազմակերպումը և սպորտով գրադարձումը: «Աբովյան» քի-ում գործում է մարզական ակունք, սակայն ջեռուցման բացակայության պատճառով ձմռանն անհնար է ապահովել դատապարտյալների սպորտային գրադարձությունը<sup>22</sup>:

Նախնկինում «Աբովյան» քի-ում պահպում էին կենդանիներ, ինչը խիստ արդյունավետ էր անչափահասներին դաստիարակելու գործում: Այժմ սույն քի-ում ֆինանսական միջոցները սակավ լինելու պատճառով կենդանիները բացակայում են:

Կրթության կազմակերպման որոշումում և «Աբովյան» քի-ում առկա են բազմաթիվ խնդիրներ՝ համապատասխան մասնագետների պակաս, ձմռան ամիսներին դպրոցը չի ջեռուցվում և այլն: Հատկապես մտահոգիչ է անչափահաս դատապարտյալների մասնակցությունը դասերին: Շատերը խուսափում են դասի ներկայանալ, իսկ քի-ի աշխա-

<sup>19</sup> St'u Juwendstrafvollzug in Deutschland und Frankreich, Daniel Boernhofer, Nomos, Auflage 2010, Giessen, էջ 200:

<sup>20</sup> St'u նույն տեղում, էջ 204:

<sup>21</sup> St'u Անչափահասների հետ տարվող սոցիալ-հոգեբանական աշխատանքների և կրթական գործընթացի ուսումնասիրություն «Աբովյան» քի-ում, քաղաքացիական հասարակության ինստիտուտ, Երևան, 2012թ., էջ 22:

<sup>22</sup> St'u նույն տեղում, էջ 23:

տակիցները, ինչպես իրենք են ասում, «պարտադրել չենք կարող»<sup>23</sup>: Առաջարկում ենք օրենսդրությամբ միջնակարգ կրթությունն անշափահաս դատապարտյալների համար դարձնել պարտադրի և այդ գործընթացին ընդգրկել համապատասխան մասնագետների, որոնք նաև կտիրապետներ հոգեբանության մի շարք հմտությունների:

Վերասոցիալականացման նպատակին նպաստող վերջնական փուլ կարելի է համարել անշափահասին քի-ից ազատելու համար կատարվող նախապատրաստական աշխատանքները: Ինչպես ցույց են տալիս «Աքրովյան» քի-ում իրականացված հարցումները<sup>24</sup>, նախապատրաստական աշխատանքները, ենթադրում են միայն հարցում ուստիկանության տարածքային բաժին, և եթե պարզվում է, որ անշափահասը ընտանիք չունի, ապա քի-ն համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ, իսկ որոշ դեպքերում ուղիղ կապ է հաստատում անշափահասների բարեկամների հետ: Ի դեպ, պետք է նշել, որ այդ նախապատրաստական աշխատանքները սկսում են, երբ պատիժը կրելուն մնացել է ընդամենը երեք ամիս, ինչը, մեր կարծիքով, շատ կարճ ժամանակահատված է անշափահաս դատապարտյալի ազատումը նախապատրաստելու համար, քանի որ անշափահասին աշխատանքով ապահովվելը, նրա ծնողների կամ այլ հարազատների հետ կապ հաստատելը, որոշ դեպքերում նաև անշափահասի բնակության վայրի խնդիրը լուծելը պետք է իրականացվեն շատ խնամքով, ինչը շատ ավելի երկար ժամանակ է պահանջում:

Այդ առումով արդյունավետ է, օրինակ, ԳՂՀ-ի պրակտիկան, որտեղ հողերի անշափահասների քրեակատարողական օրենսգրքով հստակ նախատեսված է անշափահասին քի-ից ազատելու համար կատարվող նախապատրաստական աշխատանքների մեջ մտնող միջոցառումների ցանկը, և այն չի սահմանափակվում միայն «անշափահասին ընտանիքին կամ բարեկամներին հանձնելով»: Ի դեպ, անշափահաս դատապարտայլներին ազատելու նախապատրաստմանն ուղղված միջոցառումները ուղղման պլանի բաղկացուցիչ մասն են:

Օրինակ՝ Նորդիայն Վեստֆալեն հողի անշափահասների քրեակատարողական օրենսգրքի 22-րդ հոդվածով նախատեսված է անշափահասին ազատ արձակելիս, բավարար միջոցների բացակայության դեպքում, նրան դրամական օգնություն տալը, օրինակ՝ ձանապարհածախսի և հագուստի համար<sup>25</sup>:

ՀՀ-ում քրեակատարողական հիմնարկն անշափահաս դատապարտյալին ազատելուց հետո ոչ մի պարտականություն չի կրում Վերջինիս աշխատանքով ապահովելու, միջնակարգ կամ մասնագիտական կրթական գործընթացի կազմակերպման առումով, իսկ, օրինակ, ԳՂՀ Նորդիայն Վեստֆալեն հողի անշափահասների քրեակատարողական օրենսգրքի 21-րդ հոդվածը պարտավորեցնում է քրեակատարողական հիմնարկին մինչև անշափահաս դատապարտյալին ազատելը հոգալ Վերջինիս աշխատանքի տեղափոխման, նրան միջնակարգ կամ մասնագիտական կրթական հաստատություններում ներգրավման հարցերի մասին<sup>26</sup>:

<sup>23</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 31:

<sup>24</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 32:

<sup>25</sup>Տե՛ս ԳՂՀ Նորդիայն Վեստֆալեն հողի անշափահասների քրեակատարողական օրենսգրքը, 20.11.2007:

<sup>26</sup>Տե՛ս նույն տեղում:

ԳԴՀ հոդերի անչափահասների քրեակատարողական օրենսգրքերով նախատեսվում է, որ անչափահաս դատապարտյալին ազատման նախապատրաստելիս պարտադիր պայման է հսկողության ներքո օրվա որոշակի ժամանակահատված քիչ-ի պատերից դուրս գտնվելը՝ զբոսանքի կամ աշխատանքի նպատակով։ Բացի այդ, նախապատրաստական փոլում, որը, ըստ պատժի ժամկետի, կարող է սկսվել պատժից ազատելուց 4-6 ամիս առաջ, անչափահասներին կարող է տրամադրվել մինչև 2 շաբաթ տևողությամբ հատուկ արձակուրդ՝<sup>27</sup>

Հաշվի առնելով Վերողորդյալ հանգամանքները՝ ՀՀ-ում անչափահաս դատապարտյալների վերասոցիալականացման գործընթացը բարելավելու նպատակով առաջարկում ենք ՀՀ քրեակատարողական օրենսգրքում նախատեսել առանձին գոտիս անչափահասների ազատազրկման հետ կապված պատժատեսակները կրելու առանձնահատկությունները կարգավորելու համար։ Մասնավորապես,

1. անչափահասների ազատման նախապատրաստումը և՝ ժամկետների, և՝ իրականացվող միջոցառումների բովանդակության առումով կարգավորել ավելի մանրամասն՝ հաշվի առնելով արտասահմանյան երկրների հաջողված վիրոճը,

2. նախատեսել ավելի երկարաժամկետ և հաճախակի կարձատն ու երկարատև տեսակցություններ, ինչպես նաև արձակուրդի հնարավորություն,

3. նախատեսել անչափահասների վերասոցիալականացման ընթացքն ավելի հստակ կանոնակարգող ուղղման պլան,

4. բոլոր տեսակի աշխատանքի դիմաց նախատեսել վարձատրություն։

Օրենսդրական նորմերի գործնականում կիրառելիության արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ-ում անչափահասների միակ քրեակատարողական իիմնարկում առաջարկում ենք կատարել նաև մի շարք նյութատեխնիկական բարեփոխումներ՝ կադրերի վերապատրաստում, քիչ աշխատակիցների աշխատանքային պայմանների բարելավում, դատապարտյալների կողմից սպորտով զբաղվելու անհրաժեշտ պայմանների ապահովում և այլն։

## SOME ISSUES ON RESOCIALIZATION OF IMPRISONED JUVENILES

**Liana Marukyan**

*Project Coordinator Konrad Adenauer Foundation Yerevan Office*

The process and effectiveness of fulfilling juveniles' punishments, which are connected with imprisonment, have constantly been and now are in the center of attention of theorists and practical workers. The fields of designating the types of punishments connected with juvenile imprisonment, as well as the fields of the resocialization and correction in prisons have been more and more criticised in the last 10 years. It is not accidental, that some measures are developed and implemented in the whole world to

<sup>27</sup>St' u Jugendstrafvolzug für das 21. Jahreshundert? Stephan Schwirzer, Peter Lang, Passau 2006, էջ 159-161.

keep juveniles away from imprisonment. If it is inevitable, better conditions should be provided for imposing punishments, which will be directed to the crime prevention by prisoners as well as for providing resocialization. In this regard, the Republic of Armenia is not an exception. There are many problematic issues while carrying imprisonment punishments by juveniles, which I have introduced and discussed in this article.

## РЯД ВОПРОСОВ РЕСОЦИАЛИЗАЦИИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ, ПРИГОВОРЕННЫХ К ЛИШЕНИЮ СВОБОДЫ

**Лиана Марукян**

*Проект Координатор Ереванского офиса Фонда Конрада Аденауэра*

---

Процедура и продуктивность осуществления наказаний несовершеннолетних в виде лишения свободы постоянно находилось и в настоящее время находится в центре внимания как теоретиков, так и практиков. Сфера, касающиеся назначения наказания в отношении несовершеннолетних в виде лишения свободы, а также их исправления и ресоциализация в местах лишения свободы десятилетиями все больше и больше подвергаются острой критике. Не случайно, что во всем мире организуются и осуществляются мероприятия для того, чтобы по возможности уберечь несовершеннолетних от наказаний в виде лишения свободы, а при отсутствии такой возможности для обеспечения более благоприятных условий для несения наказания, которые будут направлены, как на предотвращение новых преступлений со стороны приговоренных, так и в первую очередь на обеспечение их ресоциализации. В этом смысле Армения тоже не является исключением, где в настоящее время в процессе осуществления наказания несовершеннолетних, приговоренных к лишению свободы, возникают множество проблемных ситуаций, которые обсуждаются в данной статье.

**Թանալի բառեր** – անչափահաս, վերացողականացում, ուղղում, աշխատանք, կրթություն, լեսակցություն, սոցաշխատող, նանկավարդ

**Ключевые слова:** несовершеннолетний, ресоциализация, исправление, работа, образование, визиты, социальный работник, педагог

**Key words:** juvenile, resocialization, correction, work, education, visits, social worker, teacher